Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1) ՇՄՀ կրեդիտավորված մասնագետների և լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վերաբերյալ դիմումների ընդունում և տվյալների հավաքագրում,

2) լիցենզավորված անձանց և ՇՄՀ հավաստագրված մասնագետների գրանցամատյանների վարում,

3) մոնիթորինգի իրականացում (ուսումնասիրություն, վերլուծություն, կանխատեսում),

4) տվյալների հավաքագրում, քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից սահմանած չափորոշիչներին համապատասխան որակի գնահատում, վերլուծություն և արդյունքների գրանցում,

5) ստորաբաժանման ղեկավարին համապատասխան ոլորտի մասնագետների հավաստագրերը և քաղաքաշինության գործունեության սուբյեկտների լիցենզիաները և (կամ) ներդիրները կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ հաղորդագրության ներկայացնում,

6) համապատասխան հանձնաժողովներում քննարկման ներկայացված հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկանքների տրամադրում,

7) մասնակցություն լիցենզավորման, մասնագիտական և էթիկայի հանձնաժողովների, մոնիթորինգի իրականացման աշխատանքներում,

8) լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման վերաբերող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրում,

9) էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ որակի գնահատման չափորոշիչներին համապատասխան բարձր, միջին և ցածր աստիճանների վարկանիշավորման ապահովում՝ ինքնաշխատ եղանակով,

10) եռամսյակային հաշվետվությունների ընդունում և մուտքագրում գրանցամատյանում,

11) սահմանված մոնիթորինգի իրականացման կարգին համապատասխան քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց և ՇՄՀ հավաստագրված մասնագետների աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման մոնիթորինգի իրականացում,

12) հրամանների, գրությունների, իրավական ակտերի, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախագծերի կազմում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ պայմանագիր կնքելու օրվանից մինչև մեկ տարի:
Փորձագետի աշխատավարձը կազմում է 267 072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն,
2) Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ լիցենզավորման ենթակա գործունեության կամ փաստաթղթաշրջանառության բնագավառներում երեք տարվա աշխատանքային ստաժ,
3) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Փորձագետի պարտականությունները՝

Բարեխղճորեն կատարել պայմանագրով ստանձնած աշխատանքները, պահպանել աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները, իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ը ներառյալ:

Չի թույլատրվում պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը

դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները **g.grigoryan@minurban.am** էլեկտրոնային փոստին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1) դիմում (ձևանմուշը կցվում է),
2) անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենները,
3) կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
4) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
6) մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
7) համառոտ CV
8) հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացականության մասին (ձևանմուշը կցվում է):

Աշխատանքի վայրը՝ Քաղաքաշինության կոմիտե /ք.Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարական տուն 3/:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ հեռ. 011 621 768:

Հայտարարության ձև

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

---------- - ի
(անունը, ազգանունը և հայրանունը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով՝ հայտնում եմ հետևյալը.

Պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունը դադարեցվել է՝

1. Կարգապահական տույժ կիրառելու պատճառով _____
(այո, ոչ)
2. Օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով _____
(այո, ոչ)
3. Օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով _____
(այո, ոչ)
4. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով _____
(այո, ոչ)
5. ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով _____
(այո, ոչ)
6. Ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով _____
(այո, ոչ)
7. Երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով _____
(այո, ոչ)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

«------»---------- 2024 թ.

_____
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրություն

Քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար
պարոն Գուրգեն ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

---------- -ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

դիմողի հասցեն

դիմողի անձնագրի տվյալները,

հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով հայտարարությանը՝ ներկայացնում եմ Քաղաքաշինության կոմիտեում որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1) Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ
2) Դիպլոմի (դիպլոմների) _____էջ
3) Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ
4) Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____էջ
5) Այլ _____ էջ

Առդիր ----- էջ:

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«------»---------- 2025 թ.